

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԿԱՐՄՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ
2017 - 2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածնություն
2. ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՆ
3. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՀՐԱԳՐԱԿԱՆ ԴՐԻՔԸ, ՈՒՆԻԵՖԸ, ԲՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
4. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
6. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ , ԿՐԹԱԿԱՆ , ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ և ՍՊՈՐՏԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
7. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՍԱԿԱՆ և ԿՈՄՈՒՆԻԿԱՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ
8. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ
9. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ
10. ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
11. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԱԶՄԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ և ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
12. ԸՍՏ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋԸՆԹԱՑ ԾՐԱԳՐԵՐԻ , ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ և ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԱԿԵՐՊՈՒՄ
13. ԵԶՐԱՓՈՒԿՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքար համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման հնգամյա ծրագիր: ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ուլտրսներում), ՀԶՀԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները: Ինչպես նաև՝ «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպության կողմից մշակված և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից 2014 թվականին հավանության արժանացած «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանության» կիրառման» ուղեցույցի¹ մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը:

1. ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքար գյուղը հիմնադրվել է 1829 թ. –ին Արևմտյան Հայաստանի Բասեն գավառի Ախսա գյուղի բնագաղթածներով: Հիմնադրման պահից մինչև 1948թ.-ը կոչվել է Դարբանդ, իսկ 1948թ.-ին վերանվանվել է Կարմրաքար:

Գյուղում առկա են հետևյալ պատմամշակութային հուշարձանները՝

1. Դամբարանադաշտ
2. Կոթող
3. Մատուռ
4. Եկեղեցի

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՀՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ, ԲՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Կարմրաքար գուղը գտնվում է Գյումրի քաղաքի հյուսիս – արևելյան կողմում , ծովի մակարդակից 1700-1730 մ բարձրության վրա: Տարվա եղանակների բաշխվածությունը անհամաչափ է: Ձմռան տևողությունը 5-6 ամիս է : Ամռանը լինում է ոչ շատ շոգ եղանակ:

Համայնքը սահմանակից է Ախուրյանի տարածաշրջանի, Մեծ Մարիար, Լեռնուտ, Շիրակ, Հացիկ, Մայիսյան, Քեթի և Փոքրաշեն համայնքներին:

Բնակչությունն հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ, որի հանդիսանում է նրանց եկամուտի աղբյուրը:

թ/թ		2017
Բնակչության թիվը		62
Տղամարդ		34
Կին		28
նյութերակարգ	Բարձրագույն	4
	Միջն. մասնագիտական	9
	Միջնակարգ	8
	Ութնամյա	19
	Տարրական	2
Նպաստառուների թիվը		1
Տնտեսությունների թիվը		12
Ծնունդ		-
Մահ		-
Արտագնա աշխատանք		4
Ժամանակավոր բացակայողներ		7
Ժամանակավոր բնակվողներ		18
Դպրոցական տարիքի 7-17 տարեկաններ		1
Ծնողազուրկ երեխաներ		-
Աշխատունակներ		32
Թոշակառուներ		6
Հաշմանդամներ		2
Բնակարանի կարիքավորներ		1

Ի Ն Չ՞ Է Հ Ն Գ Ա Մ Յ Ա Ծ Ր Ա Գ Ի Ր Ը

Հնգամյա ծրագիրն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ - տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտ ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությանը համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացումը:

Տեղական ինքնակառավարման մարմիններ

Տեղական ինքնակառավարումն համայնքում իրականացվում է համայնքի ղեկավարի և ավագանու միջոցով: 2013 թվականի սեպտեմբերի 8-ին կայացած ՏԻՄ ընտրություններում համայնքի ղեկավար է ընտրվել Արթուր Վաղինակի Մաթևոսյանը:

Համայնքի ղեկավարի աշխատակազմը բաղկացած է 2 աշխատակցից, համայնքի ավագանին բաղկացած է 5 անդամից

Տեղեկություններ համայնքի ղեկավարի և աշխատակազմի աշխատակիցների

վերաբերյալ

Հ/Հ	Անուն, ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Կրթություն.	Մասնագիտ.	Ծննդյան տարեթիվ
1	Մաթևոսյան Արթուր	համ. ղեկ.	Միջնակարգ		1974թվ.
2	Մելքոնյան Սևակ	առաջատար մասնագետ	բարձրագույն	համ.տնտեսագիտ. և միջազգային տնտեսական հարաբերություն. կարգավորում	1991թվ.
3	Մաթևոսյան Լիլիթ	համ. ղեկ. Աշխ. Քարտուղար.	բարձր.	մանկավարժ, հոգեբան	1980թվ.

Համառոտ տեղեկությունն համայնքի ավագանու մասին

Կարմրաքար համայնքի ավագանին ընտրվել է 2016 թվականի հոկտեմբերի 2-ին և կազմված է 5 անդամներից:

	Անուն, ազգանուն	Ծննդյան տարեթիվը	Կրթությունը	Մասնագիտությունը
1	Մաթևոսյան Մանվել	1956թ.	միջին. մասն.	Ռադիոտեխնիկ
2	Սարգսյան Սուրեն	1962թ.	Միջնակարգ	-----
3	Ավետիսյան Մուսաննա	1961թ.	միջնակարգ	-----
4	Մաթևոսյան Երվանդ	1964թ.	միջին. մասն.	Ռադիոտեխնիկ
5	Կարապետյան Նվեր	1970թ.	միջնակարգ	

Կոմունիկացիոն համակարգեր

Համայնքը սնուցող ջրագիծ չունի, համայնքի բնակիչները ջուրը բերում են գյուղամիջյան աղբյուրից: Համայնքի խմելու ջրի պահանջներն օրական կազմում է 180-200 լիտր:

Ընդհանուր առմամբ համայնքը կոմունիկացիոն համակարգ չունի:

Անհրաժեշտ է կատարել փողոցների նորոգում, ջրատար առուների բետոնալցում ջրահեռացման ապահովում փողոցների լուսավորության անցկացում ու հեղեղատների մաքրում:

Համայնքի կոմունիկացիոն կառույցների նկարագիրը

h/h	Անվանումը	Չափման միավորը	Քանակը	Կատարման թվական	Է ենթակա վերանորոգման	Վերանստացման	Նոր կառուցված	Ծանոթություն
1	Տնային հեռախոսակապ	հատ	10	2008				

Բնակարանային տնտեսություն

Համայնքում կա 13 առանձնատուն 14.9 հազ. քմ մակերեսով: Անապահով ու բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը 1 է:

Համայնքի հողային հաշվեկշիռը

Համայնքի հողային հաշվեկշիռն ունի հետևյալ տեսքը`

1.Ըստ հողատեսքերի`

- Գյուղատնտեսական նշանակության հողեր 832,68 հա, որից վարելահող 161,49 Սեփականաշնորհված հողատեսք /վարելահող/ 812 հա
- Տնամերձ հողատեսք 74,70 հա
- Սեփականաշնորհված հողատեսք /խոտհարք/ -
- Արոտավայր/ գյուղամերձ/ 643,1 հա
- Բնակավայրի տարածք 11,27 հա
- Ճանապարհների տակ գտնվող տարածք 62.6 հա
- Կրթական ,առողջապահական և արտադրական նպատակով զբաղեցրած տարածքներ ----
- Պետական պահուստային ֆոնդի հողեր ---

Ընդամենը

- Սեփականաշնորհված մեկ հողաբաժնի չափը 3 հա
- Սեփականաշնորհումից չօգտված ընտանիքներ 3

Գյուղատնտեսություն

Համայնքի գյուղացիական տնտեսություններն հիմնականում մշակում են հացահատիկային մշակաբույսեր՝խոտ:

Ջրովի հողատարածքները մշակվում են ամբողջությամբ, իսկ անջրդի տարածքների մոտ 65% -ն անմշակ է :Արոտներն օգտագործում են 70-80 % չափով: Սակայն և հողագործության և անասնապահության բնագավառներում գերակշռում է էքստենսիվ զարգացումը,որն էլ պատճառ է դառնում բնակչության եկամուտների նվազման:

Արտադրություն

Կարմրաքարի համայնքում արդյունաբերական ձեռնարկություններ չկան:

Կրթություն

Կարմրաքարի համայնքում նախակրթարան և դպրոց չկան:

Մշակույթ, սպորտ

Գյուղը չունի մշակույթի կենտրոն, գրադարան:

Առողջապահություն

2005 թվականից գյուղում չկա բուժկետ:

Համայնքի ուժեղ կողմերը

համայնքի աշխարհագրական դիրքը
պահուստային հողեր
սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափը

Համայնքի թույլ կողմերը

Ինժինեռական ցանցի , ճանապարհային անմխիթար վիճակը
բնակարանային շինարարությունը կանգնած է ,
աշխատազուրկների առկայությունը
խմելու ջրագծերի բացակայությունը
երաժշտական ու գեղարվեստի դպրոցի բացակայությունը
նախադպրոցական հիմնարկի բացակայությունը
Հանրակրթական դպրոցի բացակայությունը
Բուժհաստատության բացակայություն

Համայնքին սպառնացող վտանգները

հոգևոր- մշակութային կյանքի իսպառ վերացումը
մարզկենտրոն Գյումրիին կապող ճանապարհի անբարեկարգ լինելը
ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ լինելը

Համայնքի ռազմավարությունն ու հիմնական նպատակները

Կոմունիկացիոն խնդիրները

Շուրջօրյա ջրամատակարարման ապահովում
ներհամայնքային բոլոր ճանապարհների բարեկարգում
միջհամայնքային ճանապարհների բարեկարգում
բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում
գյուղատնտեսության և անասնապահության շահութաբերության բարձրացում
ոռոգման ցանցի վերանորոգում և նորի կառուցում

Կառուցապատում

գերեզմանատան կառուցապատում
եկեղեցու վերանորոգում

Արտադրություն

Կաթի ընդունման ու վերամշակման արտադրամասի կառուցում
քարի մշակման արտադրամասի հիմնում

Գյուղատնտեսություն

Տեխնիկական մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացում
գյուղատնտեսության զարգացման ինտենսիվ եղանակների խթանում

Բնակարանային տնտեսություն

Հիփոթեքային վարկավորման միջոցով հին և կիսավթարային բնակարանների ներանորոգում-
ամրացում, նոր բնակելի տների կառուցում

Մշակույթ և սպորտ

Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերին նվիրված
միջոցառումների կազմակերպում

Բնապահպանություն

Կենտրոնացված աղբահանության կազմակերպում
ամենամյա ծառատնկում, դաշտապաշտպան գոտիների հիմնում
հողերի և արոտների արդյունավետ ու նպատակային օգտագործում

ԾՐԱԳԻՐ 1

ՀԱՅԻՎ - ԿԱՐՄՐԱՔԱՐ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Որոշ հատվածներում համայնքի ճանապարհները քարուքանդ են, առանձին տեղերում դրանք դարձրելով անանցանելի: Ծրագրով նախատեսվում է բարեկարգել համայնքային 3 կմ երկարությամբ ճանապարհը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է նորոգել ու բարեկարգել համայնքային ճանապարհը, որի իրագործման համար անհրաժեշտ է լուծում տալ մի քանի խնդիրների՝

1. Կազմել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր
2. 2019-2020թթ. համայնքային բյուջեով ֆինանսական ներդրումներ նախատեսել ծրագրի իրականացման համար
3. Խճալցել, ավազալցնել ճանապարհներ և հարթեցնել

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Նախնական չափազրման ու հաշվարկի արդյունքում ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները գնահատվում է 1.5 մլն դրամ, որից համայնքային ներդրումը 2019 թվականին պետք է կազմի 500.0 հազար դրամ, իսկ 2020 - 2021 թվականներին 300.0 - ական դրամ:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Նախատեսվում է աշխատանքները կատարել 2019-2021 թվականներին:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագրի իրականացման հետ կապված խնդիրների լուծումն ու աշխատանքների կազմակերպումն իրականացնելու համայնքապետարանի աշխատակազմը:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Տրանսպորտի բոլոր տեսակների համար կապահովվի երթևեկության բավարար պայմաններ տարվա բոլոր եղանակներին:

ԾՐԱԳԻՐ 2

ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՑԱՆԿԱՊԱՏՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ծրագիրը նախատեսում է համայնքի երկու գերեզմանատների ցանկապատում մետաղական ցանցով: Ցանկապատի տակ պետք է կառուցվի երկաթբետոնյան հիմք, իսկ վերնամասը եզրափակվի մետաղական անկյուններով:
Ցանկապատի ընդհանուր երկարությունը 1000 գծմ:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է ունենալ պաշտպանված ու խնամված գերեզմանատներ: Ծրագրի խնդիրներն են՝
Կառուցել մետաղական կոնստրուկցիայի 1000 գծմ երկարության ցանկապատ:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Նախանական հաշվարկներով ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները գնահատվում են 2 մլն դրամ:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել՝ 2020-2021թթ-ին: 200.0 հազար դրամ կհատկացվի համայնքի բյուջեից, իսկ մնացած 1.8 մլն այլ աղբյուրներից:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրն իրականացման պատասխանատուն հանդիսանում է համայնքապետարանի աշխատակազմը՝ համայնքի ղեկավարի անմիջական հսկողությամբ:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքի գերեզմանատները կդադարեն արոտատեղիներ լինելուց, կբացառվել վնասները:

ԾՐԱԳԻՐ 3

ԾԱՌԱՏՆԿՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ծրագրով նախատեսվում է տարեկան 50 դեկորատիվ և մրգատու ծառերի տնկում համայնքի հանգստի գոտիներում

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է ավելացնել կանաչ գոտիների տարածքը: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծելի դարձնել հետևյալ խնդիրները՝

1. Համայնքապետարանի միջոցներով ձեռք բերել տարեկան 50 տնկի
2. Նախատեսել ծառատունկի գոտիներ
3. Օգտագործել համայնքի աշխատուժը հասարարական աշխատանքի կարգով:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ծրագրի ֆինանսական միջոցները գնահատվում է 300.0 հազար դրամ 5 տարվա համար:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրն իրականացվելու է յուրաքանչյուր գարուն՝ շարունակական:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրն իրականացնելու պատասխանատվությունը դրվում է համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքի ղեկավարի վրա:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացմամբ համայնքը կունենա կանաչապատ տարածք և էկոլոգիապես մաքուր բնություն:

ԾՐԱԳԻՐ 4

ԿԱԹԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԿԱԹՆԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՏԻ ՀԻՄՆՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքում ստեղծել կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության կետ:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է աջակցել բնակչությանը տեղում կաթնամթերքի մշակման և սպառման համար:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ծրագրը նախատեսվում է իրականացնել դոնոր կազմակերպությունների օգնությամբ: Ծրագրի արժեքը կազմում է մոտ 5 մլն դրամ:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019 - 2021 թվականների ընթացքում:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագրի իրականացման պատասխանատուն հանդիսանում է համայնքապետարանի աշխատակազմը:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքի բնակիչները չեն ունենա կաթի մշակման և իրացման խնդիր:

ԾՐԱԳԻՐ 5

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԽՄԵԼՈՒ ՋՐԱԳԾԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ծրագրով նախատեսվում է համայնքում անցկացնել խմելու ջրագիծ:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակ է հետապնդում համայնքում ունենալ խմելու ջուր

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ծրագրի ֆինանսական միջոցները գնահատվում են 5 մլն դրամ, որը կիրականացվի այլ միջոցների հաշվին:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017-2021թվականների ընթացքում:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագրի իրականացման պատասխանատուն հանդիսանում է համայնքապետարանի աշխատակազմը:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքը կունենա խմելու ջուր:

ԾՐԱԳԻՐ 6

ՀԱՄԱՅՆՔԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ծրագրով նախատեսվում է եկեղեցու տանիքի և առաստաղի փայտյա մասերի փոփոխում,ինչպես նաև տանիքի թիթեղների վերանորոգում:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Պահպանել պատմա-մշակութային արժեքները:Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ են՝

Եկեղեցու և առաստաղի փայտյա մասերի փոփոխում,հողի շերտի ավելացում,տանիքի հին թիթեղների փոփոխում նորով:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Նախնական հաշվարկներով ծրագրի իրականացման համար պահանջվում է 2,5 մլն դրամ: Ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ են ներդրումներ, իսկ որոշ աշխատանքներ կկատարվի համայնքի բյուջեի միջոցներով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019-2021թվականների ընթացքում:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագրի իրականացման պատասխանատուն հանդիսանում է համայնքապետարանի աշխատակազմը:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքը կունենա նորոգված եկեղեցի:

ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հ/Հ	Ծրագրի անվանումը	ընդամենը	Նախատեսվող ֆինանսական միջոցներն ըստ տարիների/մլն դրամ					Համայն քային բյուջե	Այլ միջոցներ
			2017	2018	2019	2020	2021	2.2	14.0
1	Հացիկ - Կարմրաքար ճանապարհի բարեկարգում	1.5			500.0	150.0	150.0	800.0	700.0
2	Գերեզմանոցների ցանկապատում	2,0					100.0	100.0	1.8
3	Ծառատնկում	300.0	60.0	60.0	60.0	60.0	60.0	300.0	
4	Կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության կետի հիմնում	5.0			3.0	1.0	1.0		5.0
5	Համայնքում խմելու ջրագծի անցկացում	5,0	1.5	1.0	1.0	1,0	500.0		5,0
6	Համայնքի եկեղեցու վերանորոգում	2.5			0,7	0,8	1,0	1,0	1,5

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ , ՄԵՔԵՆՔՆԵՐԻ , ԳՅՈՒՂՏԵՆՆԻԿԱՅԻ ՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

	Անվանումը	Քանակը	Ֆիզիկական վիճակը(սարքին)
1	Բեռնատար ավտոմեքենքներ	1	անսարք

ԿԱՐՄՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՔԻ ՍՈՑԻԱԼ_ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

	ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ	Չափի միավոր	2017թ. Նախատ	2018թ. Նախատ	2019թ. Նախատ	2020թ. Նախատ.	2021 թ. Նախատ.
1	Համայնքի տարածքը	հա	941,24	941,24	941,24	941,24	
2	Բնակչության թիվը	մարդ	42	42			
3	Ծնունդ	մարդ					
4	Մահացություն	մարդ					
5	Աշխ. ռեսուրսները, այդ թվում զբաղվածներն ըստ տնտ. ճյուղերի	մարդ	30	31			
6	Գործազրկության մակարդակը	%					
7	Առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը	-	-	-	-	-	-
8	Պահուստային հողեր	-	-	-	-	-	-
9	Պահուստային հողերի օգտագործման մակարդակ	-	-	-	-	-	-
10	Խմելու ջրագծերի ներհամայնքային ցանցի երկարությունը	-	-	-	-	-	-
11	Ներհամայնքային ռոտզման ցանցի երկարությունը	-	-	-	-	-	-
12	Ռոտզման համակարգի տակ ընկած հողեր	հա	27.6	27.6	27.6	27.6	27.6
13	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	7.0	7.0	7.0	7.0	7.0
14	Զբարեկարգված փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	7.0	7.0	7.0	7.0	7.0
15	Մասնավոր բնակ. Ֆոնդ	հազ. քմ	18700	18700	18700	18700	18700
16	Բնակելի տան կարիքավոր ընտանիքների թիվը	հատ	1	1			
17	Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը,լ.	1 օր	80	80			
18	Զրի կորուստները ցանցում	%	-	-			
19	Սովորողների թիվը հանրակրթական դպրոցում	մարդ	1	1			
20	Երեխաների թիվը մանկապարտեզում	մարդ	—	—			
21	Գյուղապետարանի և	մարդ	3	3			

	Ենթակառուցվ. Աշխատողների թիվը						
--	----------------------------------	--	--	--	--	--	--

**Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի
Ֆիզիկական վիճակը**

Հ/Հ	Անվանումը	Միավորը	Ֆիզիկական վիճակը	Ծանոթություն
1	Խմելու ջրագծեր			կառուցման ենթակա
2	Եկեղեցու շենք	1		վերանորոգման ենթական
3	Ներհամայնքային ճանապարհներ			վերականգնման ենթակա

ԵԶՐԱՓՈՒԿՈՒՄ

Կարմրաքարի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրն հիմք է հանդիսանալու համայնքի տարեկան ծրագրերի, բյուջեների մշակման և կատարման աշխատանքները կազմակերպելիս:

Ելնելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագրի ռազմավարությունից և ընդհանուր նպատակներից, շատ կարևոր է սեփական եկամուտների լրացուցիչ աղբյուրներ գտնելը, ֆինանսական միջոցների արդյունավետ հավաքագրման կազմակերպումն ու նպատակային օգտագործումը:

2017- 2021 թթ. համայնքային բյուջեները պետք է մշակել որպես զարգացման ծրագրային բյուջեներ, որոնցով հնարավոր կլինի իրականացնել ինչպես ընթացիկ և հիմնական վերանորոգման աշխատանքներ, այնպես էլ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր:

Համայնքի զարգացման կոնկրետ ծրագրեր կարելի է ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարություն, Շիրակի մարզպետարան, լրացուցիչ ներդրումներ հայթայթելու նպատակով: Նախատեսվում է փնտրել ինվեստիցիաների նոր աղբյուրներ, ներգրավել գործարարների սեփական միջոցները, տարբեր սոցիալական հիմնադրումների ներդրումները:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը կազմվել է համայնքի ռազմավարության առաջնահերթ ծրագրերի ընդգրկման ու ֆինանսական միջոցների ապահովման հնարավոր համադրմամբ ու իրագործելիության բարձր հավանականությամբ: